

ուքս զվարս քո մշկորակ շօշափել կարէի, զի թափելոյ թեւօքս գրկածեալ ողջագուրէի, զի չորանալոյ շրթամբքս զքեզ համբուրել կարէի, զի կուրանալոյ աչացս յորդ արտասուօք զքեզ լուանայի: Քանզի դու զմեզ սգալոյ փոխան՝ մեք զխակահոտորդ կսկծամք, դու զմեզ կոծելու փոխան՝ մեք զմատաղաբեկդ ափսոսամք, դու զմեզ ափսոսալոյ փոխան՝ մեք զմահ քո աւաղեմք, դու զմեզ թաղելոյ փոխան՝ մեք զթաղումն քո լուեալ նուաղիմք, դու զմեզ սեւ սեւ հողով ծածկելոյ փոխան՝ մեք դառն խոցովք լցաք (Բերէ):

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 26ա-28ա)

### (Առ Եղիազար կաթողիկոս յէջմիածին)

Ջերանագունիցն ճոխապատար լրման հանգունակ օտար եւ գեր քան զընտանի, հեռի եւ ընդ միջոցաւ փակեալ եւ կարի իմն անմիջոց մերձաւոր, բացատ եւ ըստ մարմնականին անհարազատ, եւ բարձր եւ զեղուն ըստ հոգեկանին վեհափառ սէր ըստ Աստուծոյ, հայրաբար բարբար, մարդասիրաբար անճառապէս, որ գեր է քան զասելս եւ զիմանալս: Քանզի ոչ էր յանգ եւ պատշաճ ըստ իմ արժանաւորութեան սակի, այլ քոյդ ազնուական բարուցդ բիւրեղանման ճշգրիտ մարդկութիւն եւ զուտափայլ զիտութեանդ ընտրողութիւն ցուցեր զգործ:

Արդ ես մոխիրս ըստ քոյին երախտական բարբարական գորովականի, որովք անհունապէս թարգմանաւ մեկնի՝ զի՞նչ փոխարինեցից տրիտուր Տեառնդ ըստ հոգենուագին Դաւթի, զորս եւ ինձ ցուցեր ըստ